Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-570-29.07.2014-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 2-րդ մասում «2015» թվերը փոխարինել «2018» թվերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1. 2.1-ին մասում.

1) «կազմերն» բառը փոխարինել «կազմերը բաղկացած են 6 անդամներից, ովքեր» բառերով.

2) «ա», «բ» և «գ» կետերում «մեկ երրորդը» բառերը փոխարինել «երկուսը» բառով.

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.2-րդ մասով.

«2.2. 15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների (բացառությամբ՝ Երևան համայնքի)
աշխատակազմերի մրցութային և ատեստավորման հանձնաժողովները ձևավորվում են սույն հոդվածի
2.1.-րդ մասով սահմանված կարգով՝ հետևյալ հարաբերակցությամբ.

1) երկուսը՝ համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ.

2) երկուսը՝ համապատասխան համայնքի աշխատակազմի ներկայացուցիչներ (համայնքի
ղեկավար, տեղակալ, խորհրդական, աշխատակազմի համայնքային ծառայողներ).

3) մեկը՝ համայնքի ավագանու անդամ.

4) մեկը՝ գիտական և ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն
ունեցող ներկայացուցիչ:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում 1-ին ընթերցմամբ ընդունված «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
Աժ պատգամավոր Ա. Հովհաննիսյան	Նախագծի 2-րդ հոդվածը առաջարկվել է խմբագրել այն առումով, որ 15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների (բացառությամբ՝ Երևանի) աշխատակազմերի մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմում պարտադիր նախատեսվի համայնքի ավագանու 1 անդամի մասնակցությունը:	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ, մասնավորապես նախատեսվել է գործող օրենքի 13-րդ հոդվածը լրացնել 2.2 կետով: Այդ կապակցությամբ համապատասխան փոփոխություն է կատարվել նաև օրենքի նախագծի վերնագրում:
ՀՀ կառավարություն	Գործող օրենքի 13-րդ հոդվածի 2.1-ին մասում նշել, թե քանի անդամից են բաղկացած մրցութային և ատեստավորման հանձնաժողովները և այդ կապակցությամբ թվային արտահայտությամբ նշել յուրաքանչյուր մարմնի ներկայացուցիչների թիվը	Ընդունվել է	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով գործող օրենքի 13-րդ հոդվածի 2.1-րդ հոդվածում առաջարկվող փոփոխություններով նշվում է, որ հանձնաժողովների կազմերը բաղկացած են 6 անդամից, ինչպես նաև հոդվածի «ա», «բ» և «գ» կետերում «մեկ երրորդը» բառերը փոխարինվում է «երկուսը» բառով:

Աժ պատգամավոր Ս.Մարգարյան	Նախագծի 2-րդ հոդված 1ին կետում առաջարկվել է կատարել փոփոխություն «կազմերը բաղկացած են 6 անդամից, որոնք» փոխելով «կազմերը բաղկացած են 6 անդամներից, ովքեր»	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները: